կան ցեղերի պատմութիւնն է միայն: Այնտեղ ժողովրդական պարապմունքների և արհեստների մասին ոչինչ չը կայ *):

Պատմութեան մէջ առհասարակ ժողովրդի, այդ ռամիկ կոչված արարածների վերայ խօսւում է այն ժամանակ միայն, երբ որ նոքա սովից կամ վարակիչ հիւանդութիւններից ջարդվել են տասնեակ հազարներով, կամ մի բռնաւորի ոտի կոխան են եղել, գերի են գնացել և կամ գաղթել են: Դրանով միայն մենք հասկանում ենք, որ Հայաստանում ժողովուրդ էլ է եղել: Բայց նա այնքան ստոր է եղել, որ ջորիների ու ազնիւ ձիերի ցեղերը աւելի լաւ մտքով են յիշվում պատմութեան մէջ: Իսկապէս նա զրօի նշանակութիւն է ունեցել,

---

*) Ծանօթ. 1878-ին Գանձակի հարաւային լեռները (Արցախի մէջ) Գարդմանաց Փառիսոսի, Քարհատի, Գետաբեկի և Սկանապատի շուրջը պտտելիս ես պատահեցի հին բազմաթիւ հանքային բովատեղերի, մանաւանդ Քարհատի ձորը, ուր հարիւր հազարաւոր մարդիկներ աշխատել են այնտեղ. անհամար հին հանքահորերով (շախտ) բոլոր տարածութեան մակերևոյթը ծածկված են: Յայտնի չէ թէ ինչ են հանել երկրի խորքերից: 1863-ին Սկանապատումը մի պղնձի հանքահոր գտնվեց, լիքը հանքային գործիքներով: Փիփ գիւղի բաղնեղի հարաւում հին հանքի մօտ մի տեսակ սպիտակագոյն մարմարի հանք կայ, ուր դեռ նշմարվում են հին սղոցած կտորներ: Բանանց և Խաչակապ գիւղի հայերը մինչև այժմ էլ շարունակում են բովագործել իւրեանց հանքերի երկաթը: Փիփեցիք մին-